Արձանագրություն N2

<< ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-2017/1>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

02 օգոստոսի 2017թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մխեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Մարգարյան, Վ. Քեռյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Խաչատրյան

1. Հայտերի ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտվելու վայրը	Էլ. հասցե
1	«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ	ք. Երևան, Զաքիան 3, 29	COMPUTERLAND@MAIL>RU
2	«Կոմպասս» ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի 66	compassarmeps@gmail.com
3	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	Նաիրի Զարյան 22 ա	meri@gnakan.am
4	«Կոմպմարկետ» ՍՊԸ	ք. Երևան,Դավիթաշեն 4-րդ թաղ., 2բ շենք, 45 բն.	info@comp.am
5	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ	ք. Երևան, Այգեստան 9 փ., 41շ., բն. 24	info@itech.am
6	«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ	ք. Երևան, Չարենցի 1	info@eic.am

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ

Գնային առաջարկները ներկայացված են կից Հավելվածում:

3. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի՝

3.1 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, քանի որ 3-րդ չավաբաժնի մասով արձանագրության 1-ին կետով մասնակից կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի նախահաշվային գինը: Հետևաբար հիմք ընդունելով այն հանգամանքը , որ նիստին ներկա մասնակիցներ չկան, ուստի նիստը կասեցվում է և առաջարկվում է բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների սույն թվականի օգոստոսի 8-ին ժամը 10:30-ին , ք. Երևան Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեով /ընդունարան/:

3.2 41-րդ կետի՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել, քանի որ «Կոմպմարկետ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտի հավելված 3-ի ծածկագրերում արձանագրվել է անհամապատասխանություն, ինչի վերաբերյալ առաջարկվում է շտկել անհամապատասխանությունը, կամ, եթե դրա անհրաժեշտությունը չկա ներկայացնել պարզաբանում:

3.3 Անհամապատասխանություն է արձանագրվել նաև հավելված 1-ում, քանի որ պահանջ էր դրվել ներկայացնել իրավաբանական և/կամ գտնվելու վայրի հասցեները և հեռախոսահամարները, սակայն «Կոմպասս» ՍՊԸ, «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ, «Կոմպմարկետ» ՍՊԸ, «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ և «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ կազմակերպությունների կողմից նշված հավելվածում դրանք բացակայում են կամ լրացված են թերի:

3.4 Նշված կազմակերպություններին հանձնաժողովը առաջարկում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրության 2-ի 3.2 և 3.3 կետերում նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել anahit.khachatryan@parliament.am էլեկտրոնային հասցեին մինչև ս.թ. օգոստոսի 8-ը ժամը 10:30-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

4. Հաջորդ նիստ հրավիրելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել ս.թ. օգոստոսի 8-ին, ժամը 10:30-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Մարգարյան

_____ Վ. Քեռյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Ա. Խաչատրյան

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի Հավելված

Չ/հ	նախահաշվային գին	<<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ			<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ			<<Կոմպմարկետ>> ՍՊԸ			<<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ			<<Կոմպասս> ՍՊԸ			<<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ >> ՍՊԸ		
		ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով	ԳԻՆ	ԱԱՀ	Գին ԱԱՀ-ով
1	**4148000**	4405000		**4405000**			**0**	3400000	680000	**4080000**	3310750	662150	**3972900**	3489250	697850	**4187100**	3286666.67	657333.33	**3944000**
2	**420000**	432000		**432000**	404167	80833	**485000**	380000	76000	**456000**			**0**	340000	68000	**408000**	362500	72500	**435000**
3	**1300000**	1684800		**1684800**			**0**	1196000	239200	**1435200**	1124500	224900	**1349400**	1118000	223600	**1341600**	1256666.67	251333.33	**1508000**
4	**36000**	38800		**38800**	47917	9583	**57500**	20000	4000	**24000**			**0**			**0**	19833.33	3966.67	**23800**
5	**76000**	67000		**67000**	128333	25667	**154000**			**0**			**0**			**0**	45666.67	9133.33	**54800**

Արձանագրություն N3

<<ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-2017/1>> ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

08 օգոստոսի 2017թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գ. Մխեյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Ավագյան, Ս. Մարգարյան, Վ. Քեռյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Խաչատրյան

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ Ս. Մարգարյանը :

1. Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ <<Կոմպասս>> ՍՊԸ, <<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ, <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ և <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ կազմակերպությունները շտկել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել են թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.3 ենթակետում նշված անհամապատասխանությունները (հրավերի Հավելված 1), իսկ <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ և <<Կոմպմարկետ» ՍՊԸ կազմակերպությունները չեն ներկայացրել (հրավերի Հավելված 1 և վերջինս նաև Հավելված 3) ճշտված տարբերակները:

Համաձայն՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ. ենթակետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 42-րդ կետի՝ հանձնաժողովը մերժեց <<Կոմպմարկետ» ՍՊԸ և <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին

Միաժամանակյա բանակցությունների նիստին ոչ մի կազմակերպություն չէր ներկայացել, ինչով պայմանավորված հանձնաժողովը որոշեց 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթը

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ին՝ 1-ին, 4-րդ և 5-րդ, <<Կոմպասս>> ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժինների մասով՝ որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակիցներ:

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ին՝ 1-ին, <<ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ>> ՍՊԸ-ին՝ 2-րդ, <<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ-ին ին՝ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

Երրորդ տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել <<ՄՈՎՍԵՍՅԱՆ>> ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների,

ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հանձնաժողովը որոշեց առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին 3 աշխատանքային օրվա ընթացքում ընթացակարգի քարտուղարի anahit.khachatryan@parliament.am էլեկտրոնային փոստին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հաջորդ նիստ հրավիրելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել ս.թ. օգոստոսի 11-ին, ժամը 10:30-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Մխեյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Մարգարյան

_____ Վ. Քեռյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Ա. Խաչատրյան

Արձանագրություն N4

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-2017/1» ծածկագրով գնանշման հարցման
գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 օգոստոսի 2017թ.
Ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Գ. Մխեյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Ավագյան, Ս. Մարգարյան, Վ. Քեռյան, Գ. Խաչիկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Խաչատրյան

1. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-2017/1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած կազմակերպությունների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ արձանագրեց, որ «Կոմպասս» ՍՊԸ կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ կազմակերպության կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի /հավելված 6.1/ տեխնիկական բնութագրի և հրավերով պահանջվող ապրանքի տխնիկական բնութագրի միջև կան անհամապատասխանություններ:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

2. Նիստի կասեցման վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հաջորդ նիստի օր սահմանել ս. թ. օգոստոսի 15-ը ժամը 10:30: Հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել ծանուցմամբ նշված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանումները:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

3. Հայտերի գնահատման վերաբերյալ

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել և շտկվել է անհամապատասխանությունները, որի վերաբերյալ հանձնաժողովը որոշեց հաղթող մասնակից ճանաչել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին՝ 1-ին, 4-րդ և 5-րդ, «Կոմպասս» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժինների մասով՝ որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

4. Անգործության ժամկետի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը

հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցների հետ պայմանագրերը կնքվելու են անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում Կողմ՝5, դեմ՝0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Միսեյան

անդամներ՝

_____ Ա. Ավագյան

_____ Ս. Մարգարյան

_____ Վ. Քեոյան

_____ Գ. Խաչիկյան

Քարտուղար՝ _____ Ա. Խաչատրյան